«Հաստատում եմ»
Դպրոցի տնօրեն՝ _____ Ս. Պողոսյան
30. 08. 2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ N 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 5-րդ Ա ԴԱՍԱՐԱՆԻ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կարապետյան Սուսաննա Վանիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2023 – 2024 ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Դասարանի ընդհանուր բնութագիրը ուսումնական տարվա սկզբին .

5ա դասարանում 2023-2024 ուս.տ. սովորում է 35 աշակերտ՝ 14 տղա, 21 աղջիկ: Դասարանում կա 14 գերազանցիկ: Դասարանում տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ: Աշակերտական ակտիվի և ծնողական խորհրդի ջանքերի շնորհիվ ձևավորվել է ընկերասիրության, փոխադարձ օգնության և հանդուրժողականության կուռ միասնություն: Աշակերտները ակտիվ մասնակցում են դասարանական և դպրոցական միջոցառումներին:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

1. Ամբողջ տարվա ընթացքում հետևել աշակերտների կարգապահությանը և առաջադիմությանը:

2. Դաստիարակությունը կազմակերպել հաշվի առնելով անձի տարիքային և անհատական առանձնահատկությունները:

3. Համագործակցել հոգեբանի հետ

4. Հաճախակի զրույցներ անցկացնել հայրենասիրության , ընկերասիրության, աշխատանսիրության և այլ թեմաներով, որոնք նպաստում են դաստիարակության ճիշտ գործընթացին

5. Ստեղծել կանաչ անկյուն աճեցնել ծաղիկներ և խնամել դրանք

6. Համագործակցել դասարանում դասավանդող ուսուցիչների և ծնողների հետ

1 .Հայեցի դաստիարակություն.

Կազմակերպել կրթամշակութային մարզական միջոցառումներ, մրցումներ, որոնք նպաստում են երեխաների հայեցի դաստիարակությանը , նրանց առողջության ամրապնդմանը:

2. Հոգևոր դաստիարակություն.

Աշակերտների հետ զրուցել հայ եկեղեցու պատմության մասին, նաև դպրոցում դասավանդվող այդ առարկայի կարևորության մասին: Խոսել մարդու ներաշխարհի մասին, ներքին ուժի, հոգևոր արժեքների մասին:

3.Գեղագիտական դաստիարակություն.

Աշակերտների հետ զրուցել արվեստի, արհեստի կարևորության մասին: Պատկերացում կազմեն իրենց շրջապատող աշխարհի մասին: Անցկացնել զրույցներ հայ և արտասահմանյան անվանի արվեստագետների մասին:

4.Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն.

Աճող սերնդի մեջ առաջացնել սեր, հպարտության Հայոց բանակի ու նրա զինվորի հանդեպ: Աշակերտների հետ զրուցել << Ռազմագիտություն>> առարկայի դերի և նշանակության մասին:

5.Ֆիզիկական դաստիարակություն.

Աշակերտների մոտ ճիշտ վերաբերմունք ձևավորել ֆիզկուլտուրայի դասերի և սպորտային պարապմունքների նկատմամբ: Համագործակցել ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ: Ֆիզիկապես ուժեղ, կոփված ու մարտնչող հայի կերպարը դարձնել սովորողների դաստիարակության առանցքը:

6.Աշխատանքային դաստիարակություն.

Յուրաքանչյուր սովորողի մեջ ամրապնդել << Աշխատասիրությունը մարդկային արժանիք>> է կարգախոսը: Անցկացնել զրույցներ << Երբ աշխատանքը միայն ուրախություն է>>, << Աշխատանքը ազնվացնում է մարդուն>> թեմայով:

7.Բնապահպանական դաստիարակություն.

Բնության հանդեպ սերը դարձնել սովորողների բարձրարժեք մտածողության մի մասնիկը, կարողանալ սեր աճեցնել յուրաքանչյուր ծառ ու թփի հանդեպ, աճեցնել և խնամել ծաղիկները, հոգատարություն դրսևորել կենդանիների նկատմամբ:

8.Դպրոց-ընտանիք կապը.

Դպրոցի կապը ընտանիքի հետ դարձնել մշտական աշխատանքի բաղկացուցիչ օղակ: Համագործակցել ծնողների հետ . նրանց մասնակից դարձնել ուսումնա-դաստիարակչական գործընթացին, կազմակերպել անհատական և թեմատիկ խորհրդատվություններ:

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկիզբ

1.Կազմել աշակերտների անվանացանկը

2.Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը

3.Սպառիչ տեղեկություններ հավաքել դասարանի աշակերտների՝ այլ հաստատություններում լրացուցիչ կրթության մասնակցության մասին

4.Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլանը

Ամենօրյա աշխատանք

1.Վերահսկել աշակերտների բացակայությունները

2.Հետևել կարգապահությանը,վարքին

3.Հետևել հերթապահությանը դասարանում

4.Նպաստել,որ աշակերտները մասնակցեն դպրոցում անցկացվող միջոցառումներին

5. Աշխատանք տանել դժվար դաստիարակվող,սոցիալապես անապահով վիճակում գտնվող և ծնողազուրկ աշակերտների հետ.

Ամենշաբաթյա աշխատանք

1.Ստուգել աշակերտների առաջադիմությունը

2.Անցկացնել դասղեկական ժամեր

Ամենամյա աշխատանք

Ծնողական ժողովների անցկացում

Դասալսումներ

Արտադասարանական աշխատանքներ

Կիսամյակային աշխատանք

Կիսամյակների ամփոփում

Բացակայությունների հաշվառում

Անձնական գործերի լրացում

Տարեկան աշխատանք

Դասագրքերի բաշխում , հավաքում

Դասարանական անկյան ստեղծում

Աշակերտների բնութագրում

Ուսուցողական և ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում

Դասարանական միջոցառման և դասղեկի բաց դասի կազմակերպում

Տարեկան հաշվետվություն

Դաստիարակչական աշխատանքներ		
Գործառույթները	**Նպատակն ու խնդիրները**	**Ուղղվածությունը**
1.Աշակերտի սոցիալական պաշտպանության գործառույթ	1.Դասարանական կոլեկտիվի ձևավորում	1.Քաղաքացիական պատասխանատվության ձևավորում, հարգանք երկրի պատմության և մշակույթի հանդեպ
2.Կազմակերպչական գործառույթ	2.Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայրի ապահովում	2.Դասեր՝ նվիրված երկրին, քաղաքին, ազգային արժեքների ձևավորմանը, պետական և եկեղեցական տոներին
3.Աշակերտական ինքնակառավարման խթանման գործառույթ, որը երաշխավորում է նրանց ինքնուրույնության խթանումը	3.Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում	3.Գիտա-ճանաչողական էքսկուրսիաներ դեպի պատմական հուշարձաններ,թանգարաններ, տեսարժան վայրեր
4.Ախտորոշման գործառույթ, որը ենթադրում է աշակերտների ելակետային մակարդակի վերհանում և շարունակական համեմատության մեջ փոփոխությունների արձանագրում	4.Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում	3.Վնասակար սովորույթների հանդեպ բացասական վերբերմունքի ձևավորում
6.Պլանավորման, ծրագրման գործառույթ, կանոնակարգում է մանկավարժական գործունեությունը, հեշտացնում է արդյունքների հետևողական վերահսկումը	5.Աշակերտների, աշակևրտների ու մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում	4.Տարբեր խմբակների, զրույցների, կլոր-սեղան քննարկումների,բանավեճերի կազմակերպում
	6.Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում և հայեցի դաստիարակություն	5. Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում, ես-ի և մենք-ի հստակ գիտակցում

Դաստիարակչական աշխատանքներ		
Գործառույթները	**Նպատակն ու խնդիրները**	**Ուղղվածությունը**
1.Աշակերտի սոցիալական պաշտպանության գործառույթ	1.Դասարանական կոլեկտիվի ձևավորում	1.Քաղաքացիական պատասխանատվության ձևավորում, հարգանք երկրի պատմության և մշակույթի հանդեպ
2.Կազմակերպչական գործառույթ	2.Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայրի ապահովում	2.Դասեր՝ նվիրված երկրին, քաղաքին, ազգային արժեքների ձևավորմանը, պետական և եկեղեցական տոներին
3.Աշակերտական ինքնակառավարման խթանման գործառույթ, որը երաշխավորում է նրանց ինքնուրույնության խթանումը	3.Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում	3.Գիտա-ճանաչողական էքսկուրսիաներ դեպի պատմական հուշարձաններ,թանգարաններ, տեսարժան վայրեր
4.Ախտորոշման գործառույթ, որը ենթադրում է աշակերտների ելակետային մակարդակի վերհանում և շարունակական համեմատության մեջ փոփոխությունների արձանագրում	4.Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում	3.Վնասակար սովորույթների հանդեպ բացասական վերբերմունքի ձևավորում
6.Պլանավորման, ծրագրման գործառույթ, կանոնակարգում է մանկավարժական գործունեությունը, հեշտացնում է արդյունքների հետևողական վերահսկումը	5.Աշակերտների, աշակևրտների ու մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում	4.Տարբեր խմբակների, զրույցների, կլոր-սեղան քննարկումների,բանավեճերի կազմակերպում
	6.Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում և հայեցի դաստիարակություն	5. Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում, ես-ի և մենք-ի հստակ գիտակցում

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ
I	Գիտելիքի օր	Սեպտեմբեր
II	Դասարանի ավագի, ավագի օգնականի ընտրություն	Սեպտեմբեր
III	Անկախության օր	Սեպտեմբեր
IV	Զրույց՝ <<Համերաշխ դասարան>>	Սեպտեմբեր
V	Ուսուցչի օր	Հոկտեմբեր
VI	Ինչպես պաշտպանվել վարակներից	Հոկտեմբեր տեմբեր
VII	Տարերային և բնական աղետներ: Ինչ է բնական աղետը	Հոկտեմբեր
VIII	Մաքուր պահենք մեր տունը, դպրոցը, քաղաքը	Հոկտեմբեր
IX	Ինչ է իրավունքը: Մարդու իրավունքների պաշտպանության օր	Նոյեմբեր
X	Առաջին բուժօգնություն	Նոյեմբեր
XI	Ինչպես ազատվել վատ սովորույթներից	Նոյեմբեր
XII	Զրույց՝ <<Մարդիկ, որոնց հանդիպում եմ ամեն օր >>	Նոյեմբեր
XIII	Սպիտակի երկրաշարժ	Դեկտեմբեր
XIV	Զրույց՝ << Ում կուզեի նմանվել ես>>	Դեկտեմբեր
XV	Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ	Դեկտեմբեր
XVI	Ամանոր և Սուրբ Ծնունդ	Հունվար
XVII	Բարեկամությունը սկսվում է ժպիտից	Հունվար
XVIII	Հայոց բանակի օր. հունվարի 28	Հունվար
XIX	Դասը վարում է հոգեբանը	Հունվար
XX	Իմ երազանքը	Փետրվար
XXI	Տեառնընդառաջ	Փետրվար
XXII	Գրքի դերը մարդու կյանքում	Փետրվար
XXIII	Կոնֆլիկտ: Ինչպես խուսափել կոնֆլիկտներից	Փետրվար
XXIV	Ինչ է քաղպաշտպանությունը	Մարտ
XXV	Կանանց միջազգային տոն	Մարտ
XXVI	Հանդուրժողականություն: Ինչու պետք է հանդուրժել	Մարտ
XXVII	Ծիծաղի և հումորի օր	Ապրիլ

XXVIII	Ավետման և մայրության օր	Ապրիլ
XXIX	Ս. Հարություն կամ Ս. Զատիկ	Ապրիլ
XXX	Հայոց Մեծ Եղեռն	Ապրիլ
XXXI	Երազում եմ տեսնել...	Ապրիլ
XXXII	Հաղթանակի օր	Մայիս
XXXIII	Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն	Մայիս
XXXIV	Ընտանիքի դերը	Մայիս

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

Շաբաթվա օրը	Դասաժամը
Երեքշաբթի	7-րդ

Դասարանի սոցիալական անձնագիրը.

1.Աշակերտների թիվը դասարանում՝ ___35____

ա) աղջիկ՝ ___21_____ բ) տղա՝ _14_____

2.Անապահով ընտանիքների թիվը՝ __5_____

3.Բազմազավակ ընտանիքների թիվը /3 և ավելի երեխա ունեցող/՝ 14

ԴԱՍՂԵԿ՝ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ /_____/